УДК 615.847.3

Սպիտակի 1988 թվականի երկրաշարժը և նրա գիտաբժշկական հիմնահարցերը

Ս. Հ. Խաչատրյան

Հայկական բժշկ. ինստիտուտի պաթոլոգիական անատոմիայի ամբիոն
0051, Երևան, Տիտոգրադյան փ., 14

Բանալի բառեր. երկրաշարժ, աղետի գոտի, առողջապահական համակարգի վերակառուցում

1988 թվականի դեկտեմբերի 7-ին, ժամը 11.41-ին Հայաստանում տեղի ունեցավ ավերիչ երկրաշարժ, որն ընդգրկեց հանրապետության տարածքի 40%-ը: Պատմության մեջ այն մտավ որպես «Սպիտակի երկրաշարժ»: Երկրաշարժից առաջացած փլատակներից հանվեցին 40000 մարդ, 32500 վիրավորներ, 530000 մարդ մնաց անօթևան: Հանրապետությունը կրեց 13 մլրդ ռուբլու տնտեսական վնաս: Ավերվեցին ավելի քան 500 բժշկական հիմնարկներ, մահացան և վիրավորվեցին հարյուրավոր բուժաշխատողներ:

Ակնթարթային աղետը մարդկանց մոտ առաջացրեց ամենատարբեր բնույթի ծանր, բազմակի և զուգորդված վնասվածքներ: Բուժական գործունեությանը զուգընթաց, որն ընդգրկեց գրեթե ողջ գիտական բժշկական հասարակությունը, առաջ քաշվեցին կարևոր հարցեր, կապված երկրաշարժի հետևանքների վերացման հետ: Գիտաբժշկական մի շարք հարցերի պարզաբանման համար Հայաստանի առողջապահության նախարարության բժշկական գիտական խորհրդին կից ստեղծվեց «Երկրաշարժի հետևանքների վերացման բժշկական հարցերը» թեմայով հատուկ գիտական հանձնաժողով: Վերանայվեց գիտահետազոտական աշխատանքների թեմատիկան, առաջ քաշվեցին գիտական նոր մշակումներ, որոնք համապատասխանում էին գործնական բժշկության պահանջներին՝ երկրաշարժից տուժածների բուժմանը և բժշկա-սոցիալական վերակառուցմանը: Դրանց ծրագրերին համապատասխան, Հայկական ԽՍՀ առողջապահության նախարարության գիտական հիմնարկներում հետազոտություններ են կատարվել հետևյալ 10 ուղղություններով՝

1) Առողջապահության կազմակերպումը երկրաշարժի հետևանքների վերացման ընթացքում:

2) Երկրաշարժի հետևանքով առաջացած փսիխոգեն սթրեսի և դրանից առաջացած խանգարումների ուսումնասիրումը:

3) Երկրաշարժի հետևանքների վերացման գործընթացում վիրաբուժական աշխատանքների կազմակերպումը:

4) Երկրաշարժի հետևանքների վերացման գործընթացում վնասվածքաբանական աշխատանքների կազմակերպումը:

5) Երկարատև ճզմման համախտանիշի (կրաշ-սինդրոմ) պաթոգենեզը, կլինիկան, բուժումը:

6) Հոգեկան, նյարդաբանական, սրտաբանական և էնդոկրին խանգարումների պաթոգենեզը, կլինիկան և բուժումը:

7) Ինտենսիվ թերապիայի, վերակենդանացման, անէսթեզիոլոգիայի և արյան փոխներարկման խնդիրները:

8) Մանկաբուժության, մանկաբարձության և գինեկոլոգիայի հիմնահարցերը:

9) Աղետի գոտում հիգիենիկ և հակահամաճարակային կարևոր խնդիրները:

10) Երկրաշարժի հետևանքների բժշկակենսաբանական հարցերը:

Նշված հիմնահարցերի իրականացման խնդրում կարևոր հաջողության են հասել Երևանի պետական բժշկական համալսարանը, ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտը, ՀՀ ԱՆ գիտահետազոտական ինստիտուտները (վիրաբուժության, վնասվածքաբանության և օրթոպեդիայի, սրտաբանության, ուռուցքաբանության, կուրորտոլոգիայի և ֆիզիկական բժշկության, ռադիոլոգիայի և այրվածքային վնասման, համաճարակաբանության, վիրուսաբանության և բժշկական պարազիտոլոգիայի, հիգիենայի և պրոֆիլակտիկայի):

Երևանի պետական բժշկական համալսարանի ամբիոններում և ՀՀ ԱՆ Ա.Լ. Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտում ուսումնասիրվեցին կրաշ-սինդրոմի պաթոգենեզի և բուժման հարցերը: Պաթոֆիզիոլոգիայի, ֆարմակոլոգիայի, հոգեբանության, հոգեբուժության ինչպես նաև թերապիայի, մանկաբուժության, մանկաբարձության և գինեկոլոգիայի ամբիոններում ուսումնասիրվեցին աղետի գոտում փսիխոգեն սթրեսի ազդեցությունն օրգանիզմի տարբեր ֆունկցիաների վրա: Քննարկվեցին Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտում սրտի տարբեր հիվանդությունների ընթացքի, Տրավմատոլոգիայի և օրթոպեդիայի գիտահետազոտական ինստիտուտում՝ բազմակի և զուգակցված վնասվածքների, Կուրորտոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտում՝ ուղեղային վնասվածքների բուժման հարցերը: Համաճարակաբանության և հիգիենայի գիտահետազոտական ինստիտուտում ուսումնասիրվեցին աղետի գոտում ինֆեկցիոն հիվանդությունների տարածման և կանխման հարցերը, շրջակա միջավայրի վիճակը:

Նշված ամբիոնների և գիտահետազոտական ինստիտուտների աշխատանքների ղեկավարումը և իրագործումը կատարվում էր ՀՀ ԱՆ բժշկական գիտական խորհրդի կողմից (նախագահ՝ պրոֆեսոր Ս.Հ. Խաչատրյան): Դրա անմիջական նախաձեռնությամբ 1990 թ. հոկտեմբերի

9-11-ը կազմակերպվեց միջազգային համաժողով «Հայաստանի երկրաշարժի հետևանքների բժշկական տեսակետները երկրաշարժից մեկ տարի անց» թեմայով, որտեղ քննարկվեցին և ամփոփվեցին վերը նշված 10 ուղղությունների գիտական հետազոտությունների արդյունքները: Հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով տպագրվեցին նշված համաժողովի զեկուցումների նյութերը ամբողջությամբ: Որպես գիտաժողովի խորհրդանիշ ընտրվեց Գյումրիի եկեղեցին ճեղքված վիճակում:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն գրավոր ողջունեց համաժողովի մասնակիցներին, որը տպագրվեց տարբեր լեզուներով գիտաժողովի առանձին հատորների առաջին էջերում:

Խոսք Ողջույնի

Սիրով և գնահատանքով ողջունում ենք բժշկական միջազգային համագումարը, նվիրված Հայաստանի երկրաշարժի հետևանքների ուսումնասիրմանը, որի ազնիվ նպատակն է, կարծում ենք, անհրաժեշտ բժշկական օգնությունները շարունակել, երկրաշարժի հետևանքները լրիվ հեռացնել համապատասխան բժշկական միջոցառումներով:

Այս մարդասիրական նպատակի իրագործումը մեծ բարիք է հանդիսանալու մեր աղետյալ ժողովրդին, ի վերականգնում նրա մարմնական և հոգեկան առողջության:

Մեր շնորհակալությունը և մեր օրհնությունը համագումարի բոլոր հարգարժան ու անձնվեր մասնակիցներին:

Կաթողիկոս Ամենայն Հայոց
Վազգեն Ա.

Այնուհետև երկրաշարժից 10 տարի անց ավելի նեղ շրջանակներում դարձյալ կազմակերպվեց գիտաժողով Երևանում եւ Գյումրիում: Այստեղ քննարկվեցին Սպիտակի երկրաշարժի հետևանքներից առաջացած հիվանդությունների էթիոլոգիայի, պաթոգենեզի և բուժման հարցերը:

Աղետի գոտուն բնորոշ է բազմաբնույթ և տարբեր ծանրության խանգարումների առկայությունը: Հայտնի փաստ է, որ գիտական խորը հետազոտությունները հիմնականում իրագործվում են դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների միջոցով: Նշեմ, որ նման թեմայով պաշտպանվել են 6 դոկտորական և 22 թեկնածուական ատենախոսություններ:

Կցանկանայի անդրադառնալ հատկապես դոկտորական ատենախոսություններին: Նրանք բոլորն էլ ունեն տեսական և գործնական բարձր արժեք: Դրանցից են Ա. Լ. Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտի և Երևանի պետական բժշկական համալսարանի պաթոֆիզիոլոգիայի ամբիոնի համատեղությամբ ներկայացված Ռ. Ա. Հովհաննիսյանի դոկտորական ատենախոսությունը, որը վերաբերում է

երկարատև ճզմման համախտանիշի ժամանակ առաջացած արյան միկրոցիրկուլյացիայի խանգարումներին: Պաթոֆիզիոլոգիայի ամբիոնում կատարվել և պաշտպանվել է Երևան քաղաքի սեքսոպաթոլոգիայի բաժնի վարիչ Մ. Գ. Հովհաննիսյանի դոկտորական ատենախոսությունը, որը նվիրված է աղետի գոտում առաջացած փսիխոէմոցիոնալ խանգարումների ժամանակ ռեպրոդուկտիվ փոփոխություններին: Երեք դոկտորական ատենախոսություններ են պաշտպանվել Երևանի պետական բժշկական համալսարանի հիստոլոգիայի ամբիոնում (Մ. Յու. Արտիշչևա, Կ. Թ. Սահակյան, Տ. Գ. Ավագյան)՝ նվիրված կրաշ-սինդրոմի հիմնահարցերին:

Որոշակի գիտական և հատկապես գործնական նշանակություն ունի Ա. Խ. Մայրապետյանի դոկտորական ատենախոսությունը՝ կապված աղետի գոտու համաճարակաբանական խնդիրների հետ, շնորհիվ որի աղետի գոտում ինֆեկցիայի բռնկման ոչ մի դեպք չգրանցվեց: Բացի դոկտորական ատենախոսություններից երկրաշարժի հետևանքով առաջացած խանգարումների ուսումնասիրություններին են նվիրված 22 թեկնածուական ատենախոսություններ, որոնք կատարվել են Երևանի պետական բժշկական համալսարանի վիրաբուժության N1, պաթոֆիզիոլոգիայի, հիստոլոգիայի, սրտաբանության, մանկաբուժության և ակնաբուժության ամբիոններում:

Սպիտակի երկրաշարժն անջնջելիորեն մտավ ողջ աշխարհի և, հատկապես, Հայաստանի պատմության մեջ: Որպես մեծագույն աղետ այն ոչ միայն բերեց տնտեսական խոշոր վնասներ, այլ նաև՝ քարուքանդ անելով Հայաստանի լավագույն տարածքները, վերափոխեց ողջ հայ ժողովրդի բարոյահոգեբանական վիճակը: Հայ ժողովուրդը շատ անգամ է իր ուսերի վրա կրել տարբեր բնույթի ծանր աղետներ և որպես օրինաչափություն միշտ պատվով հաղթահարել է դրանց, նորից ու նորից ցույց տալով ողջ աշխարհին իր կենսունակությունը և հարատևելու իր անսպառ կարողությունը: Այս անգամ նույնպես հայ ժողովուրդն իր մեջ գտավ հզոր ուժ վերափոխվելու և իրեն բնորոշ աշխատասիրությամբ նորագույն ձևով աշխատելու՝ նորը ստեղծելու միջոցով: Հայ ժողովուրդը ոչ միայն գիտության, կուլտուրայի, արվեստի կարևոր շարժիչ ուժերից մեկն է, այլ նաև ունակ է վերականգնելու քանդվածը, ստեղծելու նոր կոթողներ, զարգացնելու վնասված տնտեսությունը և, ամենակարևորը՝ պահպանելու իր բարոյական նկարագիրը, ողջ աշխարհին ցույց տալով, որ նա կմնա «հայ» իր բոլոր արժանիքներով:

Поступила 29.08.08

Спитакское землетрясение 1988 года и его научно-медицинские аспекты

С. А. Хачатрян

7-го декабря 1988 года в 11:41 в Армении произошло разрушительное землетрясение, которое охватило 40% территории республики. В историю оно вошло как "Спитакское землетрясение". Эта катастрофа привела к разнообразным тяжелым повреждениям у населения. Были выдвинуты вопросы, связанные с медицинскими аспектами преодоления последствий спитакского землетрясения. С целью выяснения ряда важных научно-медицинских вопросов при Ученом медицинском совете Министерства здравоохранения Армянской ССР (председатель-профессор С. А. Хачатрян) создалось научное подразделение, имеющее целью "Изучение научно-медицинских вопросов преодоления последствий землетрясения". Пересматривалась научно-медицинская тематика, выдвинулись новые методы, которые соответствовали требованиям практической медицины.

1988 earthquake in Spitak and its medical aspects

S. H. Khachatryan

A devastating earthquake occurred in Armenia on the 7th of December1988, covering 40% of the territory of the country, which consequently was registered as " Spitak Earthquake". That catastrophe resulted in various heavy injuries and disturbances in the health state of the population. Issues related to the medical aspects of overcoming the consequences of the earthquake were discussed. In order to clarify a number of important scientific-medical issues, the Academic Medical Council of the Armenian SSR (chaired by professor S. A. Khachatryan) established a special division on "Studies of scientific-medical aspects of overcoming the consequences of the earthquake". The scientific-medical subjects, new methods of treatment were reviewed, in accordance with the requirements of practical medical intervention.